ԾԱՆՈՒՑՈՒՄ[1]

կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ

1. **Մշակողի կամ լիազորված անձի (առկայության դեպքում) անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը), գտնվելու կամ հաշվառման վայրը.**

2. **Անձնական տվյալներ մշակելու նպատակը և իրավական հիմքերը.**

Այս բաժնում պետք է նշվի, թե ինչու են հավաքվում այս կամ այն անձնական տվյալները (նպատակը կարող է սահմանված լինել օրենքով, կամ կազմակերպության կանոնադրությամբ):

2.1. Օրինակ – Նպատակը՝ աշխատանքային իրավահարաբերությունների ծագում, աշխատանքի բարենպաստ պայմանների ստեղծում,
Հիմքը՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք (օրինակ՝ 89-րդ հոդվածը),

2.2. Օրինակ – Նպատակը՝ հաճախորդին ծառայության մատուցում (օրինակ՝ բժշկական սպասարկում կամ անվտանգության ապահովում կամ այլ)
Հիմք՝ Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին ՀՀ օրենք, անձի համաձայնությունը, պայմանագիր եւ այլն

3. **Անձնական տվյալների շրջանակը.**

Այս բաժնում նշվում է, թե, Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13 եւ 14 կետերով սահմանված ինչպիսի անձնական տվյալներ են մշակվում

3.1. Օրինակ – Առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություն (օրինակ՝ տեղեկանք առողջական վիճակի մասին), ազգությունը, քաղաքական հայացքները, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքները, արհեստակցական միությանն անդամակցությունը եւ այլն

3.2. Օրինակ – Կենսաչափական անձնական տվյալ (լուսանկար, մատնահետք, ռենտգեն նկար, ԴՆԹ եւ այլն):

4. **Տվյալների սուբյեկտների շրջանակը.**

Այս բաժնում նշվում է, թե ում անձնական տվյալներն են մշակվում (նշումն արվում է ընդհանուր, այլ ոչ անձնավորված)

4.1. Օրինակ – աշխատակիցներ

4.2. Օրինակ – հաճախորդներ

5. **Անձնական տվյալների հետ կատարվող գործողությունների ցանկը, մշակողի կողմից անձնական տվյալների մշակման եղանակների ընդհանուր նկարագիրը.**

Այս բաժնում նշվում է, թե անձնական տվյալները ստանալու պահից սկսված ինչպիսի գործողություններ են իրականացվում դրանց հետ, ինչպես է ստացվում, ինչպես է մուտքագրվում, պահպանվում, փոխանցվում այլ անձանց եւ այլն:

5.1. Օրինակ – Անձին աշխատանքի ընդունելու դեպքում անձը տրամադրում է տեղեկանք առողջական վիճակի մասին, ինչպես նաեւ անձնական թերթիկում լրացվում է

[1] Սույն ծանուցման մեջ նշված տվյալները ենթադրյալ են, գրված են որպես օրինակներ, ուստի ամբողջական (սպառիչ) չեն, ինչպես նաեւ կարող են իրականում չհամապատասխանել որեւե անձնական տվյալ մշակողի իրական իրավազորություններին:

տեղեկություն ազգության վերաբերյալ: Անձնական թերթիկը եւ տեղեկանքը կցվում են աշխատողի անձնական գործին եւ պահվում կադրերի բաժնում մինչեւ աշխատողի՝ աշխատանքից ազատվելը: Ազատված աշխատողների անձնական գործերի հետ միասին առողջական վիճակի մասին տեղեկանքը եւ անձնական թերթիկը տեղափոխվում են արխիվ:

5.2. Օրինակ – Լուսանկարը լուսապատճենվում է (scan), բնօրինակը կցվում է հաճախորդի գործին եւ ուղարկվում արխիվ, իսկ լուսապատճենը պահվում է էլեկտրոնային համակարգում պայմանագրի էլեկտրոնային տարբերակի հետ միասին:

6. **Այն միջոցների նկարագիրը, որոնք մշակողը պարտավորվում է իրականացնել անձնական տվյալները մշակելու անվտանգության ապահովման ուղղությամբ.**

Այս բաժնում նշվում է, թե ինչպիսի միջոցներ են ձեռնարկվում անձնական տվյալները պաշտպանելու համար, ընդ որում՝ խոսքը գնում է ինչպես տեխնիկական միջոցների (տեսահսկում, անվտանգության համակարգ եւ այլն), այնպես էլ կանոնակարգերի (անձնական տվյալներին հաղորդակից դառնալու թույլտվության ստացման կարգ եւ այլն)

6.1. Օրինակ – Առողջական վիճակի մասին տեղեկանքն աշխատողի անձնական գործի հետ միասին պահվում է կադրերի բաժնի կողպվող սենյակում՝ չիրկիզվող պահարանում: Դրանք հասանելիեն միայն ղեկավարին եւ կադրերի բաժնի աշխատակիցներին: Այլ անձինք դրանց կարող են ծանոթանալ միայն աշխատակցի համաձայնությանբ՝ ղեկավարի իմացությամբ:

6.2. Օրինակ – Լուսանկարի բնօրինակը պահվում է արխիվում, որը տեսահսկվում է: Արխիվ մուտք ունեն միայն լիազորված անձնակազմը: Էլեկտրոնային համակարգը ծրագրային ներխուժողներից եւ հաքերային հարձակումներից պաշտպանելու համար ներդրված է բարձր պաշտպանության մակարդակ ունեցող ծրագիր, համակարգը պաշտպանվում է գաղտնաբառով:

7. **Անձնական տվյալների մշակումն սկսելու ամսաթիվը.**

7.1. Օրինակ – Աշխատակցի աշխատանքի ընդունվելու օրը, (եթե անձնական տվյալի մշակումը սահմանված է օրենքով, ապա օրենքն ուժի մեջ մտնելու օրը)

7.2. Օրինակ – Ծառայություն մատուցելու լիցենզիա ձեռք բերելու օրը (կամ, եթե կազմակերպությունը ստեղծման օրվանից է մշակում անձնական տվյալներ, ապա հիմնադրման (պետական գրանցման) օրը)

8. **Անձնական տվյալների մշակումն ավարտելու ժամկետները և պայմանները:**

Այս բաժնում նշվում է, թե երբ է դադարեցվում անձնական տվյալների մշակումը, այսինքն, որ պահից սկսած անձնական տվյալներ մշակողն այլեւս առնչություն չունի (որեւէ գործողություն, ներառյալ՝ պահպանություն չի իրականացնում) անձնական տվյալների հետ, ինչպես նաեւ նշվում է դադարեցման պայմանը (օրինակ՝ ոչնչացվում է, թե փոխանցվում այլ կազմակերպության)

8.1. Օրինակ – Աշխատակցի՝ աշխատանքից ազատվելուց հետո արխիվում պահվում են 5 տարի ժամկետով, այդուհետ փոխանցվում Հայաստանի ազգային արխիվ (եթե անձնական տվյալի մշակման դադարեցումը սահմանված է օրենքով, ապա օրենքում նշած ժամկետը):

8.2. Օրինակ – Ծառայություն մատուցելու ավարտից հետո անձնական տվյալները 5 տարիպահվում են արխիվում եւ ոչնչացվում: